ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 հուլիսի 2017 թվականի N 98-Ա

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև *2017 թվականի հունիսի 30-ի N 01/21.2/2851-17 գրավոր ծանուցումը*՝ **կարգադրում եմ.**

1. *Ալլա Էդվարդի Խաչատրյանին* 2017 թվականի հուլիսի 13-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի Ե. Չարենցի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2012 թվականի հուլիսի 13-ին կնքված *N 107* աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կամ առաջարկված թեկնածուի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի Ե. Չարենցի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել *Ալլա Էդվարդի Խաչատրյանին*:

3. Առաջարկել դպրոցի խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի Ե. Չարենցի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի 13
ք. Հրազդան